Ինչպես էր մեռնում ծերունին

հեղինակ՝ Վասիլի Շուկշին
թարգմանիչ՝ Արմեն Հովհաննիսյան

Ծերունին առավոտից սկսեց չարչարվել: Մի տանջող թուլություն իջավ վրան... Վաղուց արդեն թույլ էր, շուրջ մեկ ամիս, բայց այսօրվանը մի առանձնահատուկ թուլություն էր՝ այնպես տրտմած էր սիրտը, այնքան վատ էր զգում, քիչ էր մնում լաց լիներ: Սարսափ չպատեց, չէ, զարմանալի էր՝ նման թուլություն երբեք չէր ունեցել: Մեկ թվում էր, թե ոտքերն իրենը չեն... Շարժում էր մատները՝ չէ, շարժվում են: Մեկ ձախ ձեռքն էր սկսում թմրել, շարժում էր՝ կարծես, ոչինչ: Բայց ի՛նչ թուլություն էր, աստվա՛ծ...

Մինչև կեսօր դիմանում էր, սպասում. գուցե կթողնի, գուցե սիրտը մի թեթև իրար կգա՝ գուցե ծխել կուզենա կամ խմել: Հետո հասկացավ՝ մահն է եկել:

— Կնիկ... Ա՛յ կնիկ,— կանչեց իր պառավին:— Էն ա... մեռնում եմ ախր:

— Մեղա քեզ աստված...— բացականչեց պառավը:— Ինչե՞ր ես հնարում պառկած տեղդ:

— Մի բան անեիր, ինձ էստեղից իջացնեիր: Շատ եմ վատ:— Ծերունին վառարանի վրա էր պառկած:— Իջացրու:

— Մենակս բա կարա՞մ: Չգնա՞մ Եգորին կանչեմ:

— Գնա: Տանը կըլնի:

— Նոր փոփոռում էր դռանը... Գնամ:

Պառավը հագնվեց ու դուրս գնաց, սառնամանիքի ճերմակ ամպը խրճիթ թողնելով:

«Ձմեռ օրով մեռնելը դժար բան ա»,— մտածեց ծերունին:

Եկավ Եգորը՝ հարևան մարդ էր:

— Սառնամանիք ա, անտերը,— ասաց նա:— Ստեպան ապեր, համբերի, մի քիչ տաքանամ, հետո ելնեմ իջացնեմ: թե չէ կմրսացնեմ: Ինչ ա, վատացե՞լ ես:

— Շատ եմ վատ, Եգոր: Մեռնում եմ:

— Լավ հա՛, դու էլ, միանգամից կասես... Շատ դարդ մի արա:

— Անես, չանես՝ մի հաշիվ ա: Շատ ա ցո՞ւրտ:

— Հիցուն աստիճան կըլնի:— Եգորն սկսեց ծխել:— համա հանդերում ձյուն հեչ չկա: Տրակտորներով հավաքում են, բայց դե ո՛ւր:

— Վայ թե հլա գա:

— Հիմի՝ էլ դժվար: Դե լավ, արի իջացնեմ...

Պառավը մահճակալի բարձը թափ տվեց, ուղղեց փետրաներքնակը: Եգորը բարձրացավ նախավառարանի վրա, ձեռքերը մտցրեց ծերունու տակ:

— Բռնի վզիցս... Այ էդպե՛ս: Թեթև՛-թեթև՛ ես դարձել:

— Մաշվեցի...

— Ոնց որ երեխա: Կոլկաս քեզանից ծանր ա:

Ծերուհուն պառկեցրին մահճակալին, քուրքը գցեցին վրան:— Մի հատ թութուն չփաթաթե՞մ,— առաջարկեց Եգորը:

— Չէ, սիրտս չի քաշում: Ա՛խ, տեր աստված,— հոգոց հանեց ծերունին,— ձմեռ օրով մարդ չմեռնի...

— Է, ռա՛դ արա՛,— ասաց Եգորը լրջորեն:— Ձեռ քաշի էդ տեսակ մտքերից:— Աթոռակը մոտեցրեց մահճակալին, նստեց:— Պատերազմի ժամանակ, հրես, ոնց խփեցին: Ես էլ էի կարծում, թե վերջ: Բժիշկն էլ ասեց, որ ուզենաս ապրես, կապրես, որ չուզենաս, չես ապրի: Իսկի խոսալ էլ չէի կարենում: Պառկած միտք էի անում. «Էդ ո՞վ ա, որ ապրել չի ուզում, էս մարդը հո ցնդած չի՞»: Էնպես որ պառկի ու միտք արա. «Պիտի ապրե՛մ»:

Ծերունին թույլ-թույլ ժպտաց:

— Տուր մի հատ քաշեմ,— խնդրեց նա:

Եգորը տվեց: Ծերունին ծուխը ներս քաշեց ու սկսեց հազալ: Երկար ժամանակ հազում էր:

— Մի կաշի, մի ոսկոր եմ դառել... Բայց ծուխը փորս գնաց:

Եգորը ծիծաղեց:

— Ամենաշատը ո՞րտեղդ ա ցավում,— հարցրեց պառավը, ծերունուն նայելով խղճահարված ու չգիտես ինչու՝ դժգոհ:

— Ամեն տեղս... Լրիվ: Էնքան թույլ եմ, կարծես արյունս լրիվ քաշել են:

Երեքն էլ լռեցին:

Դե լավ, Ստեպան ապեր, գնամ ասաց Եգորը:— Անասունը ջրել ա պետք, խոտից-բանից գցեմ առաջները...

— Գնա:

— Իրիկունը մի հատ էլ կգամ, տեսնեմ:

— Արի:

Եգորը գնաց:

— Մարդ ինչի՞ց թույլ կըլնի: Չես ուտում, դրա համար էլ թույլ ես,— նկատեց պառավը:— Մի հատ հավ չմորթե՞նք, մսաջուր սարքեմ: Համով-համով կուտես... հը՞:

Ծերունին մտածեց:

— Հարկավոր չի: Մեկ ա, չեմ ուտելու, հավն էլ իզուր կմորթենք:

— Գրողի ծոցն ըլնի հավը: Ափսոսացի՞ր...

— Հարկավոր չի,— մի անգամ էլ ասաց ծերունին:— Լավ կըլի մի կես բաժակ արաղ տաս... Վայ թե արյունս գոնե մի քիչ խաղա:

— Չվատանաս, հա...

— Բան չկա: Վայ թե գոնե մի քիչ խաղա:

Պառավը պահարանից հանեց շիշը, որի բերանը խնամքով փակած էր լաթե խցանով: Կեսից ավելին լիքն էր:

— Տես, չվատանաս հա...

— Ախր արաղից ե՞րբ ա վատ եղել, դու էլ:— Ծերունին բարկացավ:— Ամբողջ կյանքներդ դրա վրա դողում եք, ու չեք հասկանում. արաղն ամենաառատին դեղն ա: Դդում գլուխներ...

— Գոնե հմի մի թարսվի՛,— նույնպես բարկացած ասաց պառավը:— «Դդում գլո՛ւխ»... Մի ոտն արդեն էնտեղ, էլի կանպատվի աջ ու ձախ: Բժիշկը չասե՞ց՝ չհերսոտես:

— Բժի՛շկը... Բժիշկներին որ լսես, կասեն՝ չմեռնես, համա մարդիկ մեռնում են:

Պառավը կես բաժակ օղի լցրեց, տվեց ծերունուն: Սա կում արեց ու քիչ մնաց խեղդվի: Խմածը լրիվ ետ եկավ: Երկար ժամանակ պառկած էր, ճերմակ, անշարժ: Հետո դժվարությամբ ասաց.

— Չէ, դրուստ են ասում, խմի, քանի կարաս:

Պառավը նրան էր նայում դառնությամբ ու խղճահարված: Նայեց, նայեց ու հանկարծ փղձկաց.

— Ա՛յ հալիվոր... Աստված չանի, բա որ իսկականից մեռնես, իմ ճարն ի՞նչ կլինի մեն-մենակ:

Ծերունին երկար ժամանակ լուռ էր, առաստաղին էր նայում խստահայաց: Դժվարանում էր խոսել: Բայց ուզում էր խոսել կարգին, հիմնավոր:

— Ամենից առաջ, կտաս դատարան, Միշկայից ալիմենտ կուզես: Կասես. «Հերդ մեռնելուց առաջ ապսպրեց, որ մորդ մինչև վերջ պահես»: Կասես: Թե խելքի չեկավ էդ անիծածը. կտաս դատարան: Ամոթ բան ա, բայց պիտի ապրե՞ս, թե չէ: Ավելի լավ ա, թող ինքն ամաչի: Մանկային կգրես, որ տղին ուսումի տա: Աչքաբաց ա, «Ինտերնացիոնալը» ծերից ծեր բերանացի գիտի: Կասես, «Հերդ ապսպրեց, որ ուսումի տաս»:— Ծերունին հոգնեց ու կրկին երկար ժամանակ առաստաղին էր նայում: Դեմքի արտահայտությունը հանդիսավոր էր խիստ:

— Բա Պետկայի՞ն ինչ ասեմ,— հարցրեց պառավը, արցունքները սրբելով, նա ևս տրամադրվեց խոսել լրջորեն, առանց լաց լինելու:

— Պետկայի՞ն... Պետկային հանգիստ թող՝ հազիվ ծերը ծերին ա հասցնում:

— Մսաջուրն եփեմ, հը՞: Եգորը կմորթի...

— Հարկավոր չի:

— Ինչի՞, վատանում ես:

— Էլի նույնն ա: Թող մի քիչ հանգստանամ:— Ծերունին փակեց աչքերն ու դանդաղ, կամացուկ շնչում էր: Իսկապես մեռելի էր նման, դեմքին մի տեսակ վերացածություն կար, վերերկրային անդորր:

— Ստեպա՛ն,— ձայն տվեց պառավը:

— Ըմմ:

— Ըտենց մի պառկի...

— Ո՞նց չպառկեմ, տուտուց: Մարդ ա մեռնում, սա էլ, թե՝ ըտենց մի պառկի: Բա ո՞նց պառկեմ: Չորեքթա՞թ:

— Միխեևնային չկանչեմ՝ վերջին օծման:

— Ռադ եղե՛ք... Ծա՛տ բարություն ա արել ինձ, ձեր էդ աստվածը: Ձրի տեղը հավդ կտաս Միխեևնային... Ավելի լավ ա, կտաս Եգորին, գերեզմանս կփորի: Թե չէ փորո՞ղն ով ա:

— Վայ թե ճարվի՛...

— «Կճարվի՛»: Հետո կընկնես գեղով մեկ ման կգաս՝ էս սառնամանիքին հող փորո՛ղ կճարես: Ձմեռ օրով... Գոնե ամառ ըլներ:

— Ի՞նչ եղավ, չլինի արդեն մեռնում ես: Վայ թե հլա վրա գաս:

— Հրես՝ վրա կգամ: Ոտերս արդեն սառան... Օ՛խ, աստված, աստվա՛ծ: Ծերունին խորը շունչ քաշեց:— Տեր աստված... Վայ թե իսկականից կաս, կներես ինձ՝ մեղավորիս:

Պառավը դարձյալ փղձկաց:

— Ստեպան, դիմացի մի քիչ: Եգորն ասում էր, չէ՞. «Շատ դարդ մի արա»:

— Ծա՛տ ա հասկանում: Արջի նման առողջ: Նրան որ ասես՝ չմեռնես, չի մեռնի:

— Դե, ուրեմն, ինձ էլ կներես, հալիվոր, թե մի բանում մեղավոր եմ եղել...

— Աստված թող ների,— ասաց ծերունին հաճախ լսած խոսքերը: Ինչ-որ բան էլ էր ուզում ասել, շատ հարկավոր մի բան, բայց սկսեց մի տեսակ օտարոտի չորս կողմը նայել, մի տեսակ վատ անհանգստություն իջավ վրան:

— Ագնյուշա,— դժվարությամբ ասաց նա,— ինձ կներես... մի քիչ խելառ եմ եղել... Ի՞նչ ցորեն ա, է՛, ցից-ցից... Տես, էն ո՞վ ա պուճախը կանգնած: Ո՞վ կա:

— Ո՞ւր ա, Ստեպան:

— Հրե՛ն...— Ծերունին բարձրացավ արմունկի վրա, մի զարհուրելի հայացքով նայեց դեպի խրճիթի անկյունը, իր դիմացի անկյունը:— Հրեն, է,— ասաց նա,— ա՛յ... Նստա՛ծ ա...

Եգորը եկավ երեկոյան...

Մահճակալի վրա պառկած էր ծերունին, վեր տնկած սպիտակ քիթը: Պառավը կամացուկ լաց էր լինում գլխավերևում...

Եգորը գլխարկը հանեց, մի քիչ մտածեց ու խաչակնքեց, երեսը դարձրած սրբապատկերների կողմը:

— Հա՛,— ասաց նա,— զգում էր, որ մահն եկել ա: